ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(Վահան Ռշտունու ծննդյան 100-ամյակի առթիվ)

Այս տարի բոլորեց ականավոր պատմաբան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Վահան Հարությունի Ռշտունու ծննդյան 100-ամյակը։

Չնայած մեր այսօրվա կյանքի բոլոր վայրիվերումներին, անցյալի շատ արժեքների ու դեմքերի հանիրավի մոռացության տալու դատապարտելի միտումներին, մեր սրբազան պարտքն է պատշաճը մատուցել նախորդ սերունդների այն արժանավոր ներկայացուցիչներին, որոնք ազնվորեն ու անմբնացորդ ծառայել են հարազատ ժողովրդին։

Պրոֆեսոր Վ. Ռշտունին պատկանում է այն բացառիկ մանկավարժ-գիտնականների թվին, որոնք ոչ միայն սովորական գիտելիքներ են հաղորդում իրենց սաներին ու ընթերցողներին, այլև անջնջելի հետք են թողնում նրանց սրտերում։

Վահան Ռշտունին ծնվել է 1894 թ. փետրվարի 6-ին Վաղարշապատ քաղաքում, Արևմտյան Հայաստանի Ռշտունիք գավառից գաղթած պանուկտ-արհեստավորի ընտանիքում։ Նախնական կրթությունն ստանալով ընտանիքում, ուսումնատենչ պատանին այնուհետև ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ուր նա ունկընդրում է Մանուկ Աբեղյանին, Հովհ. Մանանդյանին, Հրաչյա Աճառյանին և ուրիշ անվան ռասախոսների ու գիտնականների։ 1915 թ. ավարտելով ճեմարանը, Վ. Ռշտունին ուսուցչական աշխատանք է կատարում Թավրիզում, Ախալցխայում, Սուխումում և Թիֆլիսում։

1919 թ. Վ. Ռշտունին ընդունվում է Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի հասարակագիտական ֆակուլտետը, որն ավարտում է 1924 թ.։ Այնուհետև նա տեղափոխվում է Երևան և դասախոսական աշխատանքի անցնում պետական համալսարանում, իր կյանքի վերջին հինգ տասնամյակը նվիրաբերելով պատմաբանների բազմաթիվ սերունդների կրթության ու դաստիարակության գործին։ 1925 թ. նա համալսարանում կարդացել է սոցիալիզմի պատմություն, իսկ 1931 թ. ԽՍՀՄ ժողովուրդների պատմության դասընթաց՝ դառնալով համալսարանում այդ ամբիոնի հիմնադիրն ու անփոփոխ ղեկավարը մինչև իր կյանքի վերջը՝ 1970 թ.։ Պրոֆ. Վ. Ռշտունին այն հմուտ դասախոսներից էր, ովքեր ոչ միայն գիտելիքներ են տալիս, այլև իսկապես կրթում ու դաստիարակում իրենց սաներին։ Կոլեգաներն ու սաները մի առանձին ակնածանքով են հիշում նրա հոգատարությունը, բարությունն ու մարդ-

կային այլ առաքինությունները։ Համալսարանում աշխատած տարիներին պրոֆ. Ռշտունին եղել է նաև պատմության ֆակուլտետի դեկան, ուսումնական մասի վարիչ (պրոռեկտոր), դիտական աշխատանքների սեկցիայի ղեկավար, գործուն մասնակցություն է ունեցել նաև հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին, երկու անգամ ընտրվել է Երևանի քաղաքային խորհրդի պատգամավոր, բարեխղճորեն կատարել իր պարտականությունները։

Պրոֆ. Վ. Ռշտունին ոչ միայն հմուտ մանկավարժ էր, այլև խորաթափանց գիտնական, բեղմնավոր հետազոտող։ 1938—1952 թթ. նա համատեղության կարգով աշխատել է սկզբում ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղում (ԱրմՖԱՆ), ապա՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում։ 1940 թ. «Հայ հասարակական-քաղաքական հոսանքները և 1861—1865—1870 թթ. գյուղացիական ռեֆորմը» թեմայով նա պաշտպանել է թեկնածուական, իսկ մեկ տարի անց՝ «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.» դոկտորական դիսերտացիա։ 1943 թ. Վ. Ռշտունուն շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1946 թ.՝ գիտության վաստակավոր գործչի կոչումներ։ 1956 թ. Վ. Ռշտունին ընտրվել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, արժանացել պետական մի շարք պարգևների։

Պրոֆ. Ռշտունին, լինելով մեծ էրուդիցիայի ու անալիտիկ մտքի տեր գիտնական, կուռ տրամաբանությամբ օժտված պատմաբան, կարևոր ավանդ է ներդրել հայոց նոր և նորագույն պատմության հետազոտության բնագավառում։ Առանձնապես ուշագրավ են Արևելյան Հայաստանի XIX—XX դդ. պատմության սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ հիմնահարցերին նվիրված նրա մի շարք հետազոտությունները։ Հայ պատմագիտության մեջ նա առաջինը ուսումնասիրեց 1870 թ. Հայաստանում իրագործված գյուղացիական ռեֆորմը, հողային հարաբերությունները և գյուղացիական շարժումները, դրանց վերաբերյալ հրատարակելով նաև արխիվային արժեքավոր փաստաթղթեր։ Գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում հատկապես պրոֆ. Ռշտունու «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում» մենագրությունը, որտեղ հեղինակը մանրամասնորեն քննարկում և լուսաբանում է ռեֆորմի սոցիալ-տնտեսական նախադրյալները, նրա առանձնահատկությունները, գյուղացիների իրավական և տնտեսական վիճակը, հողի փոխկազմման պայմանները, Հայաստանում կապիտալիզմի զարգացման յուրահատկությունները, հասարակական հոսանքների դիրքը և այլ հարցեր։ Պրոֆ. Ռշտունու գիտական ժառանգության առաջնակարգ նշանակությունն այն է, որ նա, առաջինը բարձրացնելով վերը նշված հարցերը, հիմնավորեց որոշակի ուղղություն, հիմք դրեց մի դպրոցի, որին հետագայում հետևեցին շատերը։ Գյուղացիության պատմության և սոցիալ-տնտեսական խնդիրների հետ առնչվող շատ հարցեր հետագայում ավելի մանրազնին ուսումնասիրվել և լուսաբանվել են պրոֆ. Ռշտունու աշակերտների կողմից թե՛ պատմագիտության և թե՛ տնտեսագիտության բնագավառներում, ելակետ ունենալով նրա առաջադրած սկզբունքներն ու տեսակետները։

1950-ական թթ. վերջերին պրոֆ. Վ. Ռշտունին ձեռնարկեց «Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828—1917 թթ.)» երեք մասից բաղկացած աշխատության շարադրումը։ Առաջին մասն ընդգրկում է արևելահայ գյուղացիության պատմությունը 1828—1870 թթ., երկրորդը՝ ռեֆորմի և ետռեֆորմյան շրջանը։ Վերահաս մահը խանգարեց երրորդ մասի հրատարակությանը։ Գիտնականի այդ մենագրությունը ագրարային գյուղացիական հարցի վերաբերյալ երկար տարիների ընթացքում նրա կատարած ուսումնասիրությունների հանրագումարն է և կարևոր ներդրում հայ պատմագիտության մեջ։ 1956 թ. պրոֆ. Ռշտունին հրատարակեց «Հայ հասարակական հոսանքների պատմությունից» ստվարածավալ ժողովածուն, ուր ամ-

փոփված են գիտական պարբերականներում տարբեր ժամանակներում լույս ընծայված նրա մի շարք հոդվածները։

Պրոֆ. Ռշտունին զբաղվել է նաև Անդրկովկասի պատմությամբ, լուսաբանել է ցարիզմի գաղութային քաղաքականությունը պատմական տարբեր փուլերում, երկրամասում կապիտալիզմի զարգացման գործընթացը և այլ խնդիրներ։ Պրոֆ. Ռշտունին գործուն մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագրքերի և ՀԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակված հայոց պատմության բազմահատորյակի ստեղծմանը։

Մեծանուն գիտնականը իր եզրակացությունները կատարում էր փաստերի ու երևույթների բազմակողմանի համադրմամբ ու վերլուծությամբ, բարեխիղճ ուսումնասիրությամբ և բնավ պատահական չէր, որ 1950-ական թթ. սկզբներին, երբ վերադաս կուսակցական մարմինների թելադրանքով մի շարք պատմաբաններ ու բանասերներ մեղադրվեցին «բուրժուական», այսպես կոչված «միասնական հոսանքին» պահանջելու մեջ, Ռշտունին համարձակորեն պաշտպանեց իր գիտական սկզբունքները։

Պրոֆ. Վահան Ռշտունու կյանքն ու գործունեությունը սերտորեն կապված են Երևանի պետական համալսարանի և Հայաստանում պատմական գիտության զարգացման հետ։ Երախտապարտ սերունդները ընդմիշտ վառ են պահում նրա պայծառ հիշատակը։

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Ու. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ